ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2013թ. N_____ -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևանի քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեի հ.46 երկու սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Իրինա Զաքյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով նախատեսվում է Սիսակյան փողոցի հ.22 շենքի 2-րդ հարկում գտնվող հ.46 երկու սենյականոց բնակարանն անհատույց սեփականության իրավունքով հանձնել Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության անդամ, օպերային մեներգչուհի Իրինա Զաքյանին:

Իրինա Զաքյանը հայ կատարողական դպրոցի մերօրյա նվիրական և սիրելի անուններից է: Օժտված է կատարողական բարձր վարպետությամբ և իր բոլոր ելույթներով զարդարում է հայ բեմը: Այսօր հանդես է գալիս Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ տարբեր օպերային դերերգերով, որոնք մշտապես վերածվում են հոգևոր մշակութային տոնախմբության՝ արժանացնելով երգչուհուն ունկնդիրների բարձր ու ջերմ գնահատականներին: Իրինա Զաքյանը մշտապես փնտրված է համաերգային նախաձեռնությունների ծրագրերում և ոչ միայն հայրենական բեմահարթակների վրա, այլև մեր սահմաններից դուրս՝ հիացնելով օտար հանդիսատեսին հայրենական կատարողական արվեստի պրոֆեսիոնալ բարձրարժեք դրսևորումով:

Երգչուհին այսօր էլ շարունակում է իր կենսալի և սթափ ստեղծագործական գործունեությունը, պատրաստում է նորանոր կադրեր, ծավալում մանկավարժական գործունեություն՝ փոխանցելով իր գիտելիքները երիտասարդ սերնդին :

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օպերային մեներգչուհին իր գործունեությունը ծավալում է Երևան քաղաքում, որտեղ չունի բնակության վայր, ապա ստեղծագործելու համար պայմաններ ստեղծելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նշված բնակարանը տրամադրել Իրինա Զաքյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<< ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ